

# ՍԱՂՄՈՍ 24

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Փառքի Թագավորը մտնում է	Փառքի Թագավորը և Նրա Թագավորությունը	Սրբարան մտնելու օրհներգություն	Մեծ Թագավորը	Սրբարան հանդիսասավոր մուտքի համար
<u>MT ներածություն</u> Դավթի Սաղմոսը				
24:1-6	24:1-2  24:3-6	24:1-2  24:3-6	24:1-2  24:3-6	24:1-2  24:3  24:4  24:5-6
24:7-10	24:7-10	24:7-10	24:7-8   24:9-10	24:7  24:8  24:9  24:10

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

### ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը՝

1. ՅԱՀՎԵԻ մասին է, որպես արարչի (Սաղմ. 24:1-2) և որպես պատերազմողի (Սաղմ. 24:8):
2. նրանց մասին, ովքեր կարող են մոտենալ Նրան՝ երկրպագելու համար (Սաղմ. 24:3-6):

Բ. Ուշադրություն դարձրե՛ք հոմանիշ գուգահեռականության կայուն կիրառությանը:

Գ. Ուշադրություն դարձրե՛ք բացականչականներին:

1. ո՛վ դռներ՝ Սաղմ. 24:7,9
2. ո՛վ հավիտենական դռներ, Սաղմ. 24:7,9
3. Հակոբ, Սաղմ. 24:6՝ հնարավոր է «Ո՛վ Հակոբ»

Դ. Ուշադրություն դարձրեք տիտղոսներին՝ անուններին և պատկերավոր արտահայտություններին

1. նրա փրկության Աստվածը, Սաղմ. 24:5 (տես՝ Սաղմ. 18:46, 25:5, 51:14, 79:9)
2. փառքի Թագավորը, Սաղմ. 24:7,8,10 (երկու անգամ)
3. Չորեղ ու հզոր ՏԵՐԸ, Սաղմ. 24:8
4. Պատերազմելու մեջ հզոր ՏԵՐԸ, Սաղմ. 24:8
5. Չորքերի ՏԵՐԸ, Սաղմ. 24:10  
3,4,5 կետերն ունեն ռազմական նշանակություն:

Ե. Նկատե՛ք, թե ինչպես են նկարագրվում այն մարդիկ, որոնց թույլատրված է ՏԻՐՈՋ խորանում, տաճարում մոտենալ Նրան երկրպագությամբ (տես՝ Սաղմոս 15):

1. նա, որ ունի մաքուր ձեռքեր, տես՝ Հոբ 17:9, 22:30
2. նա, որ ունի մաքուր սիրտ, տես՝ Սաղմ. 73:1
3. նա, որ իր անձը չի տվել կեղծավորության, տես՝ Եզեկ. 18:15
4. նա, որ ստությամբ չի երդվել
5. նրանք, որոնք փնտրում են Նրան, տես՝ Սաղմ. 9:10, 27:4,8, 27:8, 34:4, 69:32

Հնարավոր է սա եղել է օրհներգություն Ղևտացիների կողմից, երբ երկրպագողները տոնական օրը մտնում էին խորան:

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 24:1-6**

- <sup>1</sup>ՏԻՐՈՋՆ Է երկիրն ու նրա լիությունը,  
Աշխարհն ու նրա բնակիչները:**
- <sup>2</sup>Քանի որ Նա Ինքը ծովերի վրա հիմնեց  
Ու գետերի վրա հաստատեց այն:**
- <sup>3</sup>Ո՛վ է բարձրանալու ՏԻՐՈՋ լեռը,  
Կամ ո՛վ է կանգնելու Նրա սրբավայրում:**
- <sup>4</sup>Նա, որ մաքուր ձեռքեր ու անբասիր սիրտ ունի,  
Ով իր անձն ունայնությանց չի տվել,  
Ու նենգությամբ չի երդվել:**
- <sup>5</sup>Նա ՏԻՐՈՋԻՑ օրհնություն է ստանալու  
Ու իր փրկության Աստծուց՝ արդարություն:**
- <sup>6</sup>Սա այն սերունդն է, որ փնտրում է Նրան,  
Որ փնտրում է Քո երեսը, ո՛վ Հակոբի Աստված: Սեյա**

**24:1-2** Այս համարները շեշտադրում են ՅԱՀՎԵԻՆ որպես Արարիչ (տես՝ Ծննդոց 1-2, Ելից 9:29, 19:5, Սաղմ. 50:12, 89:11, Սաղմոս 104), թե՛ շնչավոր և թե՛ անշունչ էակների, կենդանիների և մարդկանց (տես՝ Սաղմ. 146:6, Երեմ. 27:5, 51:15):

Սաղմ. 24:2-ում ներկայացված է երկիրը փոխաբերական տեսարանով որպես ջրի հիմքի վրա ստեղծված (տես՝ Սաղմ. 104:3,5, 136:6): Չուրը (թե՛ թարմ՝ այսինքն գետերը և թե՛ աղի՝ այսինքն

ծովերը) Ծննդոց 1-ում չի ասվում, որ ստեղծվեցին: ՀՄԱ-ի առասպելաբանության մեջ ջուրը դիտարկում են որպես քառսի հրեշ: Ավելի շատ տեղեկության համար, տես՝

1. Ծննդոց 1-11 գրքի Ծննդ. 1:2-ի գրառումը՝ առցանց տարբերակով [www.freebiblecommentary.org](http://www.freebiblecommentary.org)
2. NIDOTTE, հատոր 4, էջ՝ 545-549, «Երկնային պատերազմողը»: Աստվածաշնչում Աստված վերահսկում է ջուրը (տես՝ Ամովս 9:6):

Նա, ոչ թե պտղաբերության աստվածները, ջուրը գործածում է Իր նպատակների համար:

1. ստեղծագործության և դատաստանի
2. պահպանելու բույսերի և կենդանիների կյանքը (այսինքն՝ տարեկան անձրևները):

**24:1 «երկիրը . . . աշխարհը»** Առաջին բառը (BDB 75) շատ տարածված է և ունի լայն իմաստային դաշտ, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈՂ, ԵՐԿԻՐ, ԵՐԿՐԱԳՈՒՆԴ: Երկրորդ բառը (BDB 385) բանաստեղծական ՀՈՄԱՆԻՇ է, կիրառվում էմ հիմնականում Սաղմոսներում և Եսայի մարգարեության մեջ:

**24:2 «հիմնեց . . . հաստատեց»** Այս երկու ԲԱՅԵՐԸ (տես՝ Առակ. 3:19)

1. BDB 413, KB 417, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
2. BDB 465, KB 414, *Polel* ԱՆԿԱՏԱՐ

փոխկապակցված են: Այս երկուսն էլ հաստատում են, որ ՅԱՀՎԵՆ՝ Արարիչ Աստվածը, ցամաքը հաստատուն կերպով հիմնեց պուների վրա (տես՝ 1 Թագ. 2:8, Հոր 9:6, Սաղմ. 75:3), որը հասնավ մինչև օվկիանոսների հատակը և լեռների հիմքերը (տես՝ Հոր 38:4-6, Սաղմ. 18:7, 15, Հովնան 2:6):

Սա արդի գիտական նկարագրություն չէ, այլ նախագիտական բանաստեղծական պատկերավոր տեսարան: Աստվածաշունչը չի գրվել, որպեսզի պատասխանի կամ տեղեկացնի արդի գիտությանը: Այն Հնագույն Մերձավոր Արևելքի գիրք է, գրված ֆենոմենոլոգիական լեզվով (այսինքն՝ ինչպես որ երևույթները բացահայտվում են հինգ մարդկային զգայարանների համար):

**24:3-6** Սա հնարավոր է առանձնացված պարբերություն է եղել (տես՝ անգլերեն թարգմանությունների գրական բաժինների առաջին էջը): Այն քննարկում է մարդկանց, ովքեր փնտրում են երկրպագել ստեղծագործության Աստծուն (տես՝ Սաղմ. 24:6 և Համատեքստային Հասկացություններ, Ե):

Նրան երկրպագելու վայրը Երուսաղեմում խորանը՝ տաճարն է (Սաղմ. 24:3): Տաճարը ամբողջ աշխարհի խորհրդապատկերն է (տես՝ Հրեական Աստվածաշնչի Մերտողություն, էջ՝ 1308, Սաղմ. 24:1-2 և NASB Մերտողության Աստվածաշունչ, էջ՝ 762, Սաղմ. 24:2): Մի նոր գիրք, որը օգնել է ինձ հասկանալ Ծննդոց 1-2 ՅԱՀՎԵԻ Իր տաճարը կառուցելու մասին, Ջոն Ուոլթնի *Ծննդոց Մեկի Կորած աշխարհը*: Հուսով եմ, որ դուք կնայեք այս գիրքը: Այն պոտենցիալ ունի լուծելու, կամ առնվազն նվազեցնելու ընդհարումները հետևյալ հարցերի շուրջ՝

1. երկրի տարիքը
2. Էվոլյուցիան
3. Ծննդոց 1-2-ի նպատակը
4. ինչ առնչություն ունի Ծննդոց ՀՄԱ-ի ստեղծագործության մյուս պատմությունների հետ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՄԱ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՋՐԵՀԵՂԵՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ):

Այս անելու համար պահանջվում է ուխտի հնազանդությունը (տես՝ Սաղմոս 15, Սաղմ. 24:4): Նրանք ովքեր հնազանդ են կրնդունեն՝

1. ՅԱՀՎԵԻՑ օրհնություն, Սաղմ. 24:5
2. արդարություն (այսինքն՝ վրեժխնդրություն, տես՝ Ես. 54:17) փրկության Իր Աստծուց՝ Սաղմ. 24:5

Սաղմոս 24:4-6 պատասխանում է համար 3-ում հարցադրված երկու հարցերին: Այս պարբերությունը կարծես թե Համբարձման օրհներգություն լինի, որը երգում են Ղևտացիները, երբ երկրպագողները բարձրանում են Մորիա լեռան խորանը՝ տաճարը:

**24:4 «բարձրացնել»** Այս ԲԱՅԸ (BDB 669, KB 724) կիրառվում է այս Սաղմոսում մի քանի անգամ:

1. Սաղմ. 24:4 – ով իր անձը ունայնությանց չի տվել (*Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ)
2. Սաղմ. 24:5 – ստանալու է (բառացի՝ «վերցնելու է») օրհնություն (*Qal* ԱՆԿԱՏԱՐ)
3. Սաղմ. 24:7,9 – բարձրացրեք ձեր գլուխները, ով դարպասներ (*Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ)
4. Սաղմ. 24:7,9 – բարձրացրե՛ք հավիտենական դռներ (*Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ)

❖ «անձը» Սա երբրայերեն *nephesh* (BDB 659) տերմինն է: Տե՛ս՝ Սաղմոս 3:2 և Ծննդ. 35:18-ի առցանց գրառումը:

❖

<b>NASB</b>	«ստության»
<b>NKJV</b>	«կուռքի»
<b>NRSV, REB</b>	«կեղծ բանի մեջ»
<b>TEV</b>	«կուռքեր պաշտելու»
<b>NJB</b>	«ունայնությունների»
<b>JPSOA</b>	«սուտ երդման»

Այս բառը (BDB 996) հիմնականում նշանակում է «դատարկ», «ունայն» կամ «ոչնչություն»: Այն մի քանի իմաստով է կիրառվում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՐԿ, ՈՒՆԱՅՆ, ՍՈՒՏ, ՓՈՒՉ (BDB 996)

❖ Եթե Սաղմ. 24:4 իրական հավատարիմ հետևորդի համար տալիս է չորս առանձնահատկություն, և եթե երկրորդ տողը զուգահեռ է երրորդին, ապա դրանք երկուսն էլ պետք է որ վերաբերեն դատարանում տրված ճշմարիտ վկայության, և ոչ թե, որ Սաղմ. 24:4-ը վերաբերում է կռապաշտությանը: «Արդարություն» բառի կիրառությունը իրավաբանական իմաստով (տես՝ Սաղմ. 24:5բ) մեզ վստահեցնում է այս մասին: Նաև ուշադրություն դարձրեք NIDOTTE, հատոր 3, էջ՝ 153, որտեղ «մաքուր ձեռքերը» իրավական արդարացման պատկերավոր խոսք է:

**24:6 «փնտրում է... փնտրում է»** Սրանք թարգմանում են երկու տարբեր, սակայն զուգահեռ երբայերեն արմատներ՝

1. BDB 205, KB 233, *Qal* ԴԵՐԲԱՅ (MT – ԵՉԱԿԻ, *Qere* - ՀՈԳՆԱԿԻ), տես՝ Սաղմ. 78:34
2. BDB 134, KB 152, *Piel* ԴԵՐԲԱՅ, տես՝ 2 Օրինաց 4:29, 1 Մնաց. 16:11, 2 Մնաց. 7:14, Սաղմ. 27:8, 105:4, Ովս. 3:5, 5:15, Սոփ. 1:6, 2:3:

❖ «/անգլ/ *honey* հակոբի...» Սա կարելի է հասկանալ մեկից ավելի իմաստով՝

1. Հակոբի Աստվածը (LXX)
2. փնտրեք Աստծուն ինչպես Հակոբը փնտրեց Նրան
3. մեկ այլ անուն ուխտի ժողովրդի համար (ինչպես «սերունդներ»), Հակոբ = Իսրայել

❖ «Սեյա» Տե՛ս Սաղմ. 3:2-ի գրառումը և Սաղմոսների Ներածությունը, VII:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 24:7-10**

**<sup>7</sup>Ո՛վ դռներ, գլուխներդ վե՛ր բարձրացրեք  
Ու բարձրացրե՛ք հավիտենական դռներ,  
Եվ փառքերի Թագավորը ներս կմտնի:**

**<sup>8</sup>Ո՛վ է այս փառքերի Թագավորը:**

**Չորեղ ու հզոր ՏԵՐԸ, պատերազմելու մեջ հզոր ՏԵՐԸ:**

**<sup>9</sup>Ո՛վ դռներ, ձեր գլուխները վե՛ր բարձրացրեք,**

**Բարձրացրե՛ք, ո՛վ հավիտենական դարպասներ,**

**Եվ փառքերի Թագավորը ներս կմտնի:**

**<sup>10</sup>Ո՞վ է այս փառքերի Թագավորը:**

**Չորքերի ՏԵՐԸ, Ինքն է փառքերի Թագավորը: Սեյա**

**24:7-10** Դարպասները՝ հավիտենական դռները, պետք է որ վերաբերեն Տաճարի մտտ Երուսաղեմի դարպասներին (Սաղմ. 24:3): Դրանք անձնավորված են որպես թե փառքի Թագավորին՝ ՅԱՀՎԵԻՆ դիմավորողներ, երբ Նա հաղթանակից հետո մտնում է Իր տունը՝ տաճարը (տես՝ Ելից 14:14, 15:3, 2 Օր. 1:30, 3:22, այսինքն՝ սուրբ պատերազմ): Հավանական է, որ ուխտի տապանակով տաճար վերադարձող շքերթը խորհրդանշում է ՅԱՀՎԵԻ վերադարձը տաճար: Ուշադրություն դարձրե՛ք բոլոր հրամաններին:

1. գլուխներդ բարձրացրեք – BDB 669, KB 724, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. բարձրացե՛ք – BDB 669, KB 724, *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. որ փառքի Թագավորը ներս մտնի - BDB 97, KB 112, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
4. ձեր գլուխը բարձրացրե՛ք – նույնը ինչ առաջին կետը
5. բարձրացե՛ք – նույնը ինչ երկրորդ կետը, սակայն *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
6. նույնը ինչ երրորդ կետը

*UBS Ձեռնարկը* (Էջ՝ 241) առաջարկում է, որ Սաղմ. 24:7 պաշտամունքի ծեսի աղերս է այն ուխտագնացների համար, որոնք եկել են երկրպագության: Եթե այդպես է, ապա Սաղմ. 24:8 և 10 համարները հնարավոր է լինեն պատարագին վերաբերող Ղևտական պատասխաններ: Կարծում եմ Սաղմ. 24:1-6 բովանդակում է Ղևտական պատարագի խոսք, որն ասում էին տաճարի դռնապանները:

**24:10** Այս համարում ԲԱՅ չկա: «Լինել» ԲԱՅԸ նախատեսված է անգլերեն ընթերցողների համար, ինչպես նաև հնագույն եբրայերեն ընթերցողների համար:

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ կապ ունեն Սաղմոս 15 և Սաղմոս 24-ը:
2. Սահմանե՛ք «ունայնությունը» ՀԿ-յան նշանակությամբ:
3. Ի՞նչ է նշանակում «փնտրել Քո երեսը»:
4. Սաղմ. 24:7-10-ը ո՞ր իրադարձությանն է կարծես թե համարվում պատարագային մանտրա: